ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

«ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ «ԺԵ» ԵՎ «ԺԶ» ԵՎ 18-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ «ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԻ (ՊԱՀՈՒՍՏԱՖՈՆԴԻ) ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՈՒ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԱՆՀՈՒՍԱԼԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԴՈՒՐՍԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 2002 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ 2052-Ն ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 1-Ի 3-ՐԴ ԵՎ 14-ՐԴ ԿԵՏԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» եւ «ժզ» եւ 18-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի եւ ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձեւավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման եւ դուրսգրման կարգը հաստատելու մասին» 2002 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՀ կառավարության թիվ 2052-Ն որոշման Հավելված 1-ի 3-րդ եւ 14-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով կարճելու մասին գործով զեկուցողի առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» եւ «ժզ» եւ 18-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի եւ ապահովագրական ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձեւավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման եւ դուրսգրման կարգը հաստատելու մասին» 2002 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՀ կառավարության թիվ 2052-Ն որոշման Հավելված 1-ի 3-րդ եւ 14-րդ կետերի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու խնդրանքով:

2. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ վերոհիշյալ դիմումով գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով ենթակա է կարճման:

2016թ. հոկտեմբերի 4-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՀ հարկային օրենսգրքի 444-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ այն ուժի մեջ է մտել 2018թ. հունվարի 1-ից: Նույն օրենսգրքի 445-րդ հոդվածի համաձայն՝ այդ օրվանից ուժը կորցրած է ճանաչվել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը (բացառությամբ օրենքի 8-րդ եւ 11-րդ հոդվածների որոշ դրույթների), որի հիման վրա ուժը կորցնում է նաեւ ՀՀ կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի թիվ 2052-Ն որոշումը («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 3-րդ մաս):

3. Հաշվի առնելով վերոշարադրյալը եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի «ժե» եւ «ժզ» եւ 18-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաեւ «Կազմակերպությունների (բացառությամբ բանկերի եւ ապահովագրական

ընկերությունների) դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի (պահուստաֆոնդի) ձեւավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման եւ դուրսգրման կարգը հաստատելու մասին» 2002 թվականի դեկտեմբերի 19-ի ՀՀ կառավարության թիվ 2052-Ն որոշման Հավելված 1-ի 3-րդ եւ 14-րդ կետերի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

22 հունվարի 2018 թվականի
ՍԴԱՈ-1